

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

**ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԼՍԵ ՄԵՐ
ԱՂՈԹՔՆԵՐԸ ԵԹԷ ԻՐ ԿԱՄՔԲՆ
ՀԱՄԱՅՆ ԵՆ**

1.- Իրիկունը, առտուն ու կէսօրը պիտի գանգաղիմ ու հառաջեմ: Անիկա պիտի լսէ ին ծայնս (Սաղմոս 55:17):

2.- Զիս պիտի փնտոք եւ գտնէք, ձեր բոլոր սրտով պիտի խնդրէք զիս ու ես ձեզի պիտի երեւիմ, կ'ըսէ Տերը (Եր. 29:13):

3.- Արդարները կ'աղաղակեն եւ Տերը կը լսէ ու իրենց բոլոր նեղութիւններէն կը փրկէ զանոնք (Սաղմոս 34:17):

4.- Համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ այն վստահութեամ, որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք՝ կը լսէ մեզ (Ա. Յովհաննու 5:14):

5.- Խնդրեցէք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտուցէք եւ պիտի գտնէք, բախտեցէք եւ պիտի բացւի ձեզի (Մատթեոս 7:7):

6.- Եթէ այդպէս է, կը նշանակէ, թէ անոնք, որ Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ՝ հոգեւորապէս: Որովհետեւ Յոգիին Օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն: Արդարեւ, ինչ որ Օրէնքը չի կրնար ընել մարդկային բնութեան տակ ըլլալուն պատճառով, Աստուծ իրագործեց՝ աշխարհ դրկելով իր Որդին...

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԿԱՆԹԵՂ



Խորանին վրայ փոքր ճախարակ մը կ'ըլլար եւ հաւասարակշռութիւնը պահող յախճապակիէ գունդ մը, որուն մէջ կապարի փոքր գնդիկներ լեցուած կ'ըլլային, դիրացընելու համար կանքելոր վար քաշելու, նոր ձեր լեցնելու, պատրոյզը փոխելու եւ վերստին վեր բարձրացնելու աշխատանքը:

Ներկայիս կանքելներու գործածութիւնը նուազած է, հիմնականօրէն մէկ կանքեղ կը տեսնենք Ս. Սեղանին վրայ կախուած, որպէս մշտավառ կանքեղ:

Կանքեղներ, հաւատացեալներու պաշտամունքին արժանացած սրբանկարներուն վերեւ, որ հաւատացեալներ մոմ վառելով իրենց ուխտը կը կատարեն եւ սրտազեղ աղերսանքներով կ'աղօրեն:

Ա Այսօր ընդհանրացած երեւոյթ է, որ արծաթեայ կանքեղներուն մէջ փոխան ձերի եւ պատրոյզի՝ ելեկտրական լոյսեր կը վառեն:

ՃՐԱԳ ԸԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ -

Bouj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300 -facebook-ի էջ Jerak ՃՐԱԳ ՔԵՐ

ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգս Ա. Քենջ. Սարգսիսեան

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ՃՐԱԳ Է ՈՒ ՀԱՅԻՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ա. 119.105)

ԺԶ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 15 ՅՈՒՆԻԿՐ 2023

ԹԻՒ 3

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒՃԱՇԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես 54.1-14: Ա. ՏՄ 1.1-11: Յհ 2.1-11

ԱԽԵՏԱՐԱՆ ՀԱՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 2.1-11

Յիսուսի Գալիլիա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանա քաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ իրակրտ էին հարսանիքին: Երբ զինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ-«Գինի չունին»:

«Մա՞յր, մեզի ի՞նչ», - պատասխանեց Յիսուս, - «իմ ժամանակս տակաւին չէ հասած»:

Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն. - «Ինչ որ ըսէ ձեզի՝ կատարեցէ՞ք»: Հրեաներու ծիսական մաքրութեան սովորութեան համաձայն, հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իրաքանչիւրը ութսունէն հարիւր լիթր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն. - «Կարասները ջուրով լեցուցէ՞ք»:


Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց. - «Հիմա առէ՞ք եւ սեղանապետին տարէ՞ք»:

Անոնք ալ տարին: Սեղանապետը համտեսեց զինիի փոխուած ջուրը, բայց չփացաւ՝ թէ ուրկէ էր. թէեւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին գիտէին: Այն ատեն սեղանապետը փեսային ըսաւ. - «Ամէն մարդ նախ ընտիր զինին կը հրանցնէ, իսկ երբ զինովնամ՝ այն ատեն հասարակը, մինչ դուն ընտիր զինին պահեր ես մինչեւ հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլիայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց եւ աշակերտները հաւատացին իրեն:

«Սեղանապետը համտեսեց զինիի փոխուած ջուրը, բայց չփացաւ թէ ուրկէ էր», չնանցաւ Յիսուսը իբրեւ տուիչը այդ պարգևելին: Այսօր որքան մարդիկ կան, որոնք կը վայելեն Սատուծոյ պարգևեները, բարիքներն ու ողորմութիւնները, առանց սակայն անդրադառնալու, որ Սատուած Ովսէա մարգարէին բերնով կ'ըսէ. «Մայրդ չփացաւ թէ ցորենը, զինին ու իւղը ե'ս էի, որ իրեն կու տայի, իր արծաթն ու ոսկին ե'ս էի, որ կը շատցնէի» (Ովս. 2.8): Սատուած կը տրտմի, երբ կը վայելենք իր շնորհքները առանց շնորհակալ ըլլալու: Ան մանաւանդ կը տրտմի, երբ իր կողմէ մեզի տրուածները կը գործածենք մեր անձնական հանոյքներուն ու փառքին համար, փոխանակ իր փառքին համար:

Ա. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ



Յովհաննէս Կարապետը՝ Յիսուս Քրիստոսի գալուստը վկայած մարդարէներէն վերջինն է, որ հետագային նաեւ մկրտեց զԱյն՝ այնուհետեւ կոչւելով «Յովհաննէս Մկրտիչ»։ Ան մեծ համբաւ ունէր իր ապաշխարհութեամբ, քարոզութեամբ եւ իրեն հետեւրդներու մկրտութեամբ։ Իր հանդէպ յարգանքը այնքան մեծ եղած է, որ իր հետեւրդները հարց կու տային, թէ արդեօք ի՞նքն էր Քրիստոսը։

Հայաստանեաց առաքելական եկեղեցին Յովհաննէս Կարապետի յիշատակը կը նշէ չորս առիթներով, որոնցմէ երկուքն են՝ ծնունդը եւ զիխատումը։

Սրբոյն Յովհաննու Կարապետի ծննդեան տօնը կը զուգաղիպի Շաբաթ, 14 Յունուար, 2023-ին։ Այս առիթով կը շնորհաւորենք բոլոր Յովհաննէս եւ Կարապետ անունը կրող մեր եկեղեցոյ զաւակներուն անուանակոչութեան տօնը մաղթելով բոլորին արեւշատութիւն։

ՀԱՅՈՒՄ ՊԱՏՎԱԽԱՎԱ ԲԱԺԻՆ

Ի՞նՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՔԱՌԱՄՆՈՐԵԱՅ ԸՆԾԱՅՈՒՄԸ

Ի հետեւումն չին կտակարանի, մանուկը ծնելէն ետք, մայրը զինք 40-րդ օրը տաճար կը տանի ծննդեան անմաքրութենէն սրբուելու եւ մանուկը Աստուծոյ ընծայելու համար (տե՛ս Ղեւտ. 12.6-8)։ Այս օրէնքին սահմանադիրը Աստուած ի՞նքն է՝ Հին Ուխտի Եկեղեցին մէջ, որ Քրիստոսի վրայ ալ կատարուեցաւ։ Այդ պատճառաւ, Նոր Ուխտի Եկեղեցին ալ տնօրինեց այդ մէկը կատարել, ո՛չ միայն անդրանիկներու պարագային, այլ՝ բոլոր նորածիններուն։

Ի՞նՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ «ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԱՑԵՆԵՑՈՒՆ»-Ը, ՈՐ ՔԱՎԱՆԱՆ ՊԱՏՎԱՐԱԳԻ

ԸՆԹԱՅՔԻՆ ՅԱՋԱԽ ԿԸ ԿՐԿՆԵ

Հետեւեալ իմաստը ունի. նախ՝ Քրիստոս իր ծնունդով երկինքի եւ երկրի միջեւ խաղաղութիւն հաստատեց, ինչպէս հրեշտակները երգեցին։ Ապա՝ մկրտութենէն ետք աշխարհին արքայութեան Աւետարանը սկսաւ քարոզել եւ Աստուծոյ հետ հաշտութեան ճանապարհը սկսաւ ուսուցանել։ Ի վերջոյ, մատնութեան երեկոյին, առաքեալ-ներուն աւանդեց ըսելով՝ «Խաղաղութիւն կը թողում ձեզի։ Իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի» (ՅՀ. 14.27), եւ քահանան Քրիստոսէն առնելով խաղաղութիւնը, ժողովուրդին կու տայ։

Սրբոյն Յովհաննու Կարապետի ծննդեան տօնը կը զուգաղիպի Շաբաթ, 14 Յունուար, 2023-ին։ Այս առիթով կը շնորհաւորենք բոլոր Յովհաննէս եւ Կարապետ անունը կրող մեր եկեղեցոյ զաւակներուն անուանակոչութեան տօնը մաղթելով բոլորին արեւշատութիւն։

ՀՈՎԵՒՈՐ ՊԱՏՎԱ

Լո՛ւո կենանք, որպէսզի Աստուած գործէ

Խարայելացիները ազատագրուելեն ետք Եգիպտոսի գերութենէն, եկան եւ կանգ առին կարմիր ծովու ափին։ Անոնք պէտք էր անցնէին Կարմիր ծովէն որպէսզի նամբայ ելլէին դէպի խոստացեալ Քանանու երկիրը։ Տակաւին ծովափն էին, երբ յանկարծ տեսան Եգիպտոսիները, որ իրենց կողմը կը սուրային կատաղորէն։ Ժողովուրդը սարսափահար եղած Մովսէսին դիմեց։ Մովսէս անոնց ըսաւ. «Տէրը ձեզի համար պիտի պատերազմի։ Դուք լո՛ւո կեցե՛ք» (Ծն. 14.14)։ Լուո կենալ, կը նշանակէ վստահիլ ու ապահնիլ Աստուծոյ։ Սիրելինե՛ր, քող աշխարհ վազք մեր վրայ, իսկ մենք սորվինք լուրթեամբ վստահիլ Աստուծոյ։ Վստահինք Եստուծոյ նոյնիսկ, եթէ ամբողջ ծով մը ունինք մեր դիմաց մեր նամբան փակող, ինչպէս էր պարագան նրայցիներուն։

ԽՐԱՏ ԲՈԼՈՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՐՁՆԿԱՑԻ

ՀԱՒՍՏՔԻ ՄԱՍԻՆ

Հաւատքը մարդուն սիրտին մէջ արմատացած տունկ է, որուն արմատը՝ Հայրն է, արմատին վրայ գտնուող ոստը՝ Որդին է, տունկին եւ ոստին վրայի անթառամ ծաղիկը՝ Ս. Հոգին, իսկ քաղցրահամ պտուղը՝ բոլոր բարի գործերն են, որովհետեւ պտուղը՝ արմատէն, ոստէն եւ ծաղիկն էր յառաջնայ, ինչպէս բարի գործերը՝ հաւատքէն։ Ինչպէս, որ ծառը առանց պտուղի գեղեցիկ չերեւիր եւ առանց ծառի պտուղ չըլլար, նոյնպէս հաւատքը առանց գործի վայելուչ չէ, ոչ ալ գործերը՝ առանց ճշմարիտ եւ ուղիղ հաւատքի։

ԵԹԵ ԿԱՄ, ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

Որքան կարելի է ձեզի, ամեն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէ՛ք (Հովմ. 12.18)։

Մարդ մը, որ հարցեր կ'ունենար իր դրացիին հետ, չանաց խաղաղութեամբ լուծել զանոնք։ Համոզուելով, որ կարելի պիտի ըլլար սիրով վերջ տալ ծագած դժուարութեանց, ան դիմեց օրէնքին։ Բացատրելու համար իր տեսակետը, ան ըսաւ. «Լուրջ չանք ըլլի գործադրելու առաքեալին պատուէր՝ խաղաղութիւն ունենալու մարդոց հետ, բայց անօգուտ։ Ծնորհակալ եմ Աստուծոյս անոր համար, որ ան չէ ըսած, թէ խաղաղութեամբ պէտք է ապրիլ բոլոր մարդոց հետ կեանիքի բոլոր պարագաներուն տակ։ Աստուած այդպէս չ'ըսեր որպիսեաւ գիտէ, թէ կարգ մը մարդոց հետ խաղաղութեամբ ապրիլ կարելի չէ»։

Դժբախտաբար շատեր իրենց կարելին ի գործ չեն դներ՝ խաղաղութեամբ ապրելու համար։ Տղայ մը հարցուց իր հօրը, թէ ինչպէս կը սկսին պատերազմները եւ հայրը այսպէս պատասխանեց. «Սուածին աշխարհամարտը սկսաւ երբ Գերմանիա գրաւեց Պելնիքան»։ Ճիշդ այդ պահուն մայրը միջամտեց եւ ըսաւ. «Հանիս Եշմարտութիւնը յայտնէ։ Պատերազմը սկսաւ մարդու մը սպանութեան պատեհառով»։ Ամուսինը բարկացաւ եւ պոռաց. «Ո՞վ կը պատասխանէ տղուն հարցումին. դո՞ւն թէ ես»։ Կինն ալ բարկացաւ եւ դուռը ուժգին զարնելով դուրս ելաւ։ Տղան ըսաւ. «Հայր, հիմա գիտեմ, թէ պատերազմները ինչպէս կը սկսին»։

Արդեօք դուն բարկութեամբ կը հակադրես, թէ մշակած ես խաղաղութեամբ ապրելու սպիրութիւնը։ Յիսուս աղօթեց իր թշնամիներուն համար։ Դուն ալ կ'աղօթե՞ս։ Փորձե՛ն խաղաղութեամբ ապրիլ բոլորին հետ։